

**ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ՉՊԱՀԱՆՋՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ. ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆ Հ. Ս.

[ԱՄՆ, Կալիֆորնիայի (Լոս Անջելես) համալսարան]

1990 թ. ԱՄՆ պետական արխիվներում հայտնաբերված փաստաթուղթը բորբոքեց այս աշխատության շարադրման իմ հետաքրքրությունը¹: Դա Նյու Յորքի կյանքի ապահովագրական ընկերության փոխնախագահ Թոմաս Ա. Բաքների 1922 թ. նոյեմբերի 20-ի նամակն է՝ ուղղված ԱՄՆ-ի պետքարտուղար Չարլզ Էվանս Հյուգսին: Թուրքիայի և Առաջին աշխարհամարտում դաշնակից տերությունների միջև Լոզանում (Շվեյցարիա) ընթացող հաշտության պայմանագրի ստորագրման բանակցությունների ընթացքում գրված այս փաստաթուղթը և նրա հավելվածը նոր լույս են սփռում Հայոց ցեղասպանության թյուր ուսումնասիրված՝ ոճրին նախորդող շրջանի՝ հայերին պատկանող տասնյակ հազարավոր կյանքի ապահովագրման պայմանագրերի իրավական կարգավիճակի վրա:

Այս նորահայտ փաստաթղթերի և նրանց լրացնող նյութերի իմաստն այն ապշեցուցիչ, ճարպիկ նենգամտությունն է, որը դրսևորեցին երկուստեք՝ ապահովագրողներն ու ոճրագործները: Այս փաստաթղթերը պարզաբանում են այն հինգ գլխավոր գործոնները, որոնք պարզորեն շրջում են նախացեղասպանության շրջանի հայերի կյանքի ապահովագրման պայմանագրերի գոյության, կարգավիճակի, ճակատագրի ավանդական տեսակետները՝ 1. Նյու Յորքի կյանքի ապահովագրական ընկերության (ՆՅԿԱԸ) նման, բազմաթիվ եվրոպական և ամերիկյան ապահովագրողներ Հայոց եղեռնից հետո պարտավոր էին փոխհատուցել չհայցված հազարավոր ապահովագրական պայմանագրերի դիմաց: 2. Առկա հազարավոր պայմանագրերից միայն մի քանի զոհերի ժառանգների հայցերն են բավարարվել: 3. Համաձայն ապահովագրական ընկերությունների՝ հայերի շրջանում հանկարծակի մահացածության աճը եղել է թուրքական կառավարության կողմից գործած զանգվածային սպանությունների արդյունք: 4. Թուրքական կառավարությունը հետագայում պաշտոնապես ընդգրկվել է հայերի կյանքի ապահովագրման գումարներն իր օգտին զանձելու գործընթացի մեջ: 5. Ամերիկյան և եվրոպական ապահովագրական ընկերությունները իրենց կառավա-

¹ Հեղինակը ցանկանում է իր խորը երախտագիտությունն արտահայտել Կալիֆորնիայի պետական հալասարանի (Ֆրեզնո) պրոֆ. Տիգրան Գույումջյանին՝ աշխատանքը կարդալու և խրախուսական խոսքերի համար իր անկեղծ շնորհակալությունն է հղում Լիոն Ֆերմանյանին և Տիգրան Գարագյոզյանին՝ այս շարադրանքին առնչվող կարևոր նյութեր տրամադրելու համար: Երախտապարտ է Կալիֆորնիայի պետական հալասարանի (Լոս Անջելեսի) պրոֆ. Ալբերտ Բոյմին՝ աշխատանքը քննադատաբար կարդալու և իր ջանքերին աջակցելու համար, Գրիգոր Էրմոյանին, որը թույլ տվեց ներկայացնելու իր հորեղբոր՝ 1912թ. «Նյու Յորք Լայֆ»-ի հետ կնքած պայմանագիրը: Խորապես գնահատում է Նինա Վանգի կողմից գործի սկզբնական խմբագրումը: Հեղինակը փաստաթուղթը հայտնաբերել է 1990 թ. ԱՄՆ-ի պետական արխիվներում:

րություններից խնդրել են Թուրքիային պատասխանատու ճանաչել և վերահաս հաշտության պայմանագրում իրենց պատասխանատվությունից ազատող հատուկ հոդվածներ մտցնել:

ՆՅԿԱԸ-ի նամակը և նրան կից 11 էջանոց հավելվածը (ֆրանսիական «Յունիոն Վի» ապահովագրական կազմակերպության ներկայացրած պահանջահայցը), պետքարտուղարության փաստաթղթերի հետ համատեղ մանրամասնում են այս հինգ գլխավոր բաղադրատարրերը՝ հանդիսանալով այս հետազոտության միջուկը: Վերջերս հայտնաբերված աղբյուրները նոր էջ են բացում Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրման ոլորտում: Առաջին, ծագում է չփոխհատուցված կյանքի ապահովագրման պայմանագրով գումարների վերականգնման և դրանց իրավահաջորդության հարցը: Երկրորդ, արդյո՞ք ոճրագործները պատասխանատու են փոխհատուցման համար: Այս երկակի հեռանկարները, ի վերջո, հանգեցնում են հետևյալ հատկանշական հարցադրումներին՝ 1. Արդյո՞ք չհայցված պայմանագրերն իրավական տեսանկյունից փոխհատուցելի են այսօր, 2. Արդյո՞ք իրավական է ապահովագրողների կողմից իրենց ապահովագրած զոհերի նկատմամբ պայմանագրերով սահմանված իրավունքների դիմաց պատասխանատվությունից խուսափումը, 3. Արդյո՞ք պատասխանատու են ոճրագործները փոխհատուցելու պայմանագրերի դիմաց: 4. Կարելի՞ է արդյոք դասեր քաղել նմանատիպ պահանջահայցներից, որոնք ներկայացվեցին ողջակիզման վերապրողների կողմից, 5. Կարո՞ղ է արդյոք Հայ պահանջատերերի ասոցիացիան լիազորվել պահանջահայցով հանդես գալու հայ զոհերի անունից:

Ամերիկյան պաշտոնական արխիվային ավելի քան 75 տարի գաղտնի պահված նյութերի գաղտնագերծումը բացահայտում է բիզնեսի փոփոխական, նենգամիտ և սեփական շահը հետապնդող քաղաքականության աշխարհը: Հայոց ցեղասպանության ուսումնասիրման համար բացառիկ նշանակություն ունի պաշտոնական փաստաթղթերի տեքստային վերլուծության գործադրումը: Դա դյուրացնում է հիմնախնդիրը:

Քանի որ Առաջին աշխարհամարտի բռնկման սկզբին հայերի կյանքի ապահովագրման պայմանագրերի պատահական հղումները ընդունվել են կեսլուրջ, մինչև այժմ զգացնել է տալիս դրանց քանակի, ճակատագրի և վավերականության մասին հակիրճ և փաստացի պատմության պակասը: Խնդրո վերաբերյալ պատմության բացակայությունը բխում է այն փաստից, որ առանձին մարդկանց մասին մեծ քանակությամբ տեղեկությունները շուրջ 75 տարի թաքցվել են ԱՄՆ-ում և Եվրոպայում: Պետքարտուղարության նմանատիպ փաստաթղթերի հայտնաբերումը, չնայած ամբողջական չէ, բայց, այնուամենայնիվ, հնարավորություն է տալիս վերստեղծելու այդ (Ժամանակի երկու ամենամեծ ապահովագրողների) պատմությունը: Աղբյուրներում առկա շարադրանքը և փաստերը օգնում են ապահովել հեռվից տեսանելի լայն հնարավորությունը, իրավացիորեն և համապարփակ կերպով հետամուտ լինելու ավելի քան 80 տարի մոռացության տրված, չհայցված պայմանագրերի իրացմանը:

Համաձայն փաստաթղթերի՝ 1915 թ. եղեռնի նախօրեին օսմանահպատակ հայերը ամերիկյան և եվրոպական բազում ապահովագրողներից գնել էին կյանքի

ապահովագրման տասնյակ հազարավոր պայմանագրեր: Դրանց գերակշիռ մասը ամերիկյան էր:

Այն բացառիկ հանգամանքները, որոնց ներքո ապահովագրված հայերը մահացան, առաջացնում են այդ գոհերի ժառանգների փոխհատուցման պահանջի իրավահաջորդության հարցը: Համաձայն փաստաթղթերի՝ մի քանի ապահովագրված գոհերի ժառանգներ հանդես եկան պահանջահայցելով և ամերիկյան՝ տեղի հյուպատոսարանների, միսիոներների և Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանատան անմիջական օժանդակությամբ ու ջանքերով ստացան փոխհատուցումը: Այսպիսով, ապահովագրական ընկերությունների կողմից փոխհատուցում ստանալու հարցում նրանց ճանաչեցին որպես իրավահաջորդներ:

Մինչ բռնագաղթված, ապահովագրված գոհերի վերապրողները հուսահատ ճիգեր էին գործադրում՝ ստանալու իրենց պայմանագրերով սահմանված փոխհատուցումը, թուրքական կառավարությունը ևս լծվեց հայերի ապահովագրման պայմանագրերով սահմանված փոխհատուցումը իր օգտին ստանալու գործին: Թուրքիայի առևտրի և գյուղատնտեսության նախարարը Թալեաթի հրահանգավորած հատուկ շրջաբերականներ ուղարկեց եվրոպական և ամերիկյան ընկերություններին՝ խնդրելով իրենց մոտ ապահովագրված հայերի ցուցակը:

Հայոց ցեղասպանությունը առևտրական ձեռնարկատիրության մեջ ապահովագրողների համար ստեղծեց դժվարին կացություն: Բայց արդյո՞ք ապահովագրական ընկերություններն ունեին իրավական հիմքեր Թուրքիայի դեմ, որը նրանց կազատեր իրենց հաճախորդների նկատմամբ ունեցած պայմանագրային պարտավորություններից: Այլ խոսքերով ասած, իրավունք ունի՞, արդյոք, ապահովագրական ընկերությունը պահանջ հարուցել ընդդեմ երրորդ կողմի՝ իր հաճախորդների «անօրինական սպանությունների» համար: 1915թ.

Գերմանական հրթիռով բրիտանական «Լուիզիտանիա» շոգենավի խորտակումը, որի հետևանքով հազարից ավելի ուղևորներ զոհվեցին, տվյալ հարցում դատական (իրավական) նախադեպ է: Ամերիկյան 128 գոհերից 11-ը ապահովագրված էին ամերիկյան ապահովագրական ընկերություններում: Մի շարք դատական գործերի արդյունքը եղավ այն, որ ԱՄՆ-ը, ներկայացնելով ապահովագրական ընկերություններին, փորձեց պատասխանատու ճանաչել գերմանական կառավարությանը՝ վճարելու փոխհատուցման գումարները՝ «սպանիչ գործողություն» իրականացնելու համար: Այս ամենը դրդում է վերհիշելու հայերի «անօրինական սպանությունների» դեպքը: Ստորև քննարկված՝ «Լուիզիտանիայի» համար մղված երկարատև դատական մարտը հանգեցնում է երկու մանրամասն և պատմական գուգահեռների, որը հայերի դեպքում կարելի է մեկնաբանել որպես «փոքր դատաիրավական նախադեպ»: Հայերի դեպքում, չվճարելու փորձը կիրառելիս, ապահովագրական կազմակերպությունները իրենց կառավարություններից համապատասխանաբար խնդրեցին 1920թ. Սևրի պայմանագրի մեջ հատուկ հոդվածներ մտցնել՝ բացահայտորեն ճանաչելու հայերի ապահովագրական պայմանագրերը՝ որպես թուրքական պատասխանատվություն: Այդ հոդվածներն ազատելու էին ապահովագրողներին իրենց գոհերի նկատմամբ ստանձնած ֆինանսական պարտավորություններից՝ առանց վնասելու իրենց հասարակական

վարկանիշը: Արդյո՞ք չհայցված և չվճարված պայմանագրերով իրավունքները վերականգնելի են այսօր՝ 85 տարի մոռացությունից հետո: Այս հարցը քննարկվում է երկու տեսանկյունից: Առաջին, 50 տարի անց ցեղասպանության վերապրողների կողմից իրականացված ապահովագրական պայմանագրերով սահմանած պահանջների օրինականությունը և դրանց հաջող հետապնդումը օգտակար դեր է խաղում իրավադատական նախադեպի համար: Երկրորդ, այդպիսի մի նախադեպ գոյություն ունի վերջերս՝ 137 տարի առաջ ոսկով բեռնված «Կենտրոնական Ամերիկա» ընկերված նավի նկատմամբ ապահովագրական ընկերությունների կողմից իրավունքների վերականգման դեպքում: Այս պատմական նախադեպերը բանականորեն օրինական հիմքեր են ապահովում այսօր հայերի չփոխհատուցված և չպահանջված՝ կյանքի ապահովագրման պայմանագրերով իրավունքների հետապնդման համար:

Նախքան Առաջին աշխարհամարտի սկիզբը «Նյու Յորք լայֆ»-ը և Փարիզի «Յունիոն լայֆ» կյանքի ապահովագրական ընկերությունները տասնյակ հազարավոր պայմանագրեր էին վաճառել հայերին: Երրորդ ապահովագրողը՝ Նյու Յորքի «Էքուիթաբլ լայֆ աշուրանս» (Equitable Life Assurance Society of New York) կազմակերպությունը նույնպես ակտիվ էր և հայերին էր վաճառել բազմաթիվ պայմանագրեր: Մինչ կներկայացվեն փաստաթղթային ապացույցներ այս երեք ապահովագրական ընկերությունների վերաբերյալ, անհրաժեշտ է նշել, որ նախքան պատերազմը տարբեր բրիտանական, ավստրիական, իտալական, գերմանական և իսպանական ապահովագրական ընկերություններ ակտիվ գործունեություն էին ծավալել Թուրքիայում կյանքի ապահովագրման առևտրական ձեռներեցության ոլորտում: Այս ապահովագրողների գործարքների վերաբերյալ դեռևս գոյություն չունի որևէ քանակական տեղեկություն, մեծ մասամբ այն պատճառով, որ նրանք մինչ օրս մնում են հասարակության ուշադրությունից դուրս: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի պետքարտուղարության փաստաթղթերը ցույց են տալիս, որ Լոնդոնի «Սթար»-ը (Star of London) և շվեյցարական «Լա ֆեդերալ»-ը (La Federale) բավական ակտիվ են եղել²:

Թուրքիայի ամենամեծ առևտրական գործարքներում գերիշխում էր «Նյու Յորք լայֆ»-ը: Հիմնադրվելով 1845 թ. և միայն իր անդամներին որպես Ընկերություն անվամբ հայտնի լինելով՝ այն հիմնադիրների և տնօրենների կողմից երկրպագվում և ընկալվում էր որպես միսիոներական շարժում³: Ընկերությունը շարունակեց իր գործունեությունը Թուրքիայում՝ մինչև 1914 թ. պատերազմի սկիզբը: Ընկերությունը արգասաբեր առևտրական գործունեություն գտավ Թուրքիայի ունևոր և ավանդապաշտ հայ ընտանիքների միջավայրում: Նրա

² Shavarsh Toriguian, *The Armenian Question and International Law*, 2nd ed. (La Verne, Calif.: University of La Verne Press, 1988), p. 144. Լա ֆեդերալի գործունեության վերաբերյալ ապացույցները կքննարկվեն ստորև:

³ Lawrence Fraser Abbott, *The Story of NYLIC: A History of the Origin and Development of the New York Life Insurance Company from 1845 to 1929* (New York: The Company, 1930), p. 113. Հեղինակը գրքի առաջաբանում նշում է, որ այն հովանավորվել է «Նյու Յորք լայֆ»-ի կողմից:

«ապահովագրման կազմակերպությունը, որի մշտական կայանը Նյու Յորքն էր, ավելի քան 20 տարի զբաղվել է թուրքական կայսրությունում կյանքի ապահովագրման առևտրական գործարքներով, ուստի այժմ թուրքական քաղաքացիների հետ ունի կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց չվճարված ընդհանուր առմամբ շուրջ 10281134 դոլարի գումար: Եվրոպական պատերազմը բռնկվելուց և անցած օգոստոսից հետո ընկերությունը դադարեցրեց թուրքական կայսրությունում նոր ապահովագրական պայմանագրերի կնքումը և 1914 թ. հոկտեմբերին որոշեց մշտապես լքել Թուրքիան և, համաձայն այդ որոշման, ամենուր հավուր պատշաճի չեղյալ հայտարարեց կայսրությունում իր միջնորդ գործակալների հետ կնքած պայմանագրերը»⁴: Պետքարտուղարին ուղղված իր նամակում «Նյու Յորք լայֆ»-ի աշխատակիցը խնդրում էր, որ Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն օժանդակեր Կ. Պոլսում «լուծարման գրասենյակ» բացելուն: «Նյու Յորք լայֆ»-ի փոխնախագահը խնդրում էր պետքարտուղարին՝ պատվիրել դեսպանին, որ նա համոզի թուրքական իշխանություններին՝ չտարածելու ընկերության վրա հարկման նոր օրենքը: «Թուրքական կայսրությունը նոր օրենք է ընդունել, որը հարկադրում է... Օրենքով պարտադրվող պայմաններից մեկը Առևտրի նախարարության մատնանշած բանկում 5-10 հազար ֆունտի նախնական կանխավճարի դեպոզիտագրման պահանջն է: Կարո՞ղ ենք արդյոք մենք Ձեր միջոցով խնդրել Կ.Պոլսում ամերիկյան դեսպանին ընկերության գործունեությունը ավարտելու համար թուրքական կայսրությունում աջակցել տեղական գրասենյակներ կամ գրասենյակ ստեղծելուն՝ լուծարելու թուրքական ապահովագրվածների հետ կնքած պայմանագրերը՝ առանց թուրքական նոր ապահովագրման մասին օրենքի առարկա դառնալու»⁵:

Պետքարտուղար Բրիանը բավարարեց «Նյու Յորք լայֆ»-ի ցանկությունները՝ անմիջապես պատվիրելով դեսպան Մորգենթաունին՝ անել ամեն ինչ, օգնելու համար «Նյու Յորք լայֆի»-ին, որ լուծարի իր չվճարած հաշիվները Թուրքիայում⁶: Մորգենթաուն գեկուցեց, որ դեսպանատունը «ապահովում է ամեն հնարավոր աջակցություն՝ընկերության բոլոր խնդիրները լուծելու համար»⁷: Չնայած ՆՅԱԸ-ն նամակը ցույց է տալիս ընկերության՝ Թուրքիայում կնքած գործարքների ճշգրիտ ողջ գումարը, չի նշում, սակայն, պայմանագրատերերի ո՛չ քանակը և ո՛չ էլ անվանացանկը:

1922 թ. նոյեմբերի 20-ով թվագրված մեկ այլ նամակ առաջին անգամ բացահայտում է, որ ՆՅԱԸ-ից կյանքի ապահովագրման պայմանագրեր գնած մարդկանց նշանակալի մասը հայեր էին: Նամակը ԱՄՆ-ի պետքարտուղար Չարլզ

⁴ Մակինտոշը պետքարտուղար Բրիանին, 20 մարտի, 1915, *U. S. National Archives, RG 59, file 867.5064/3*.

⁵ Նույն տեղում:

⁶ Պետքարտուղար Բրիանը Մորգենթաունին, 23 մարտի, 1915, *U.S. National Archives, RG 84, file 850.6*.

⁷ Դեսպան Մորգենթաուն պետքարտուղարին, 26-օգոստոսի, 1915, *U.S. National Archives, RG 59, file 867.5064/5*.

Էվանս Հյուգսին էր ուղարկվել «Նյու Յորք լայֆ»-ի փոխնախագահ Թոմաս Ա. Բաքների կողմից. «Այս ապահովագրություններից շատերը ապահովագրել են հպատակ ժողովուրդների՝ հայերի և այլոց կյանքը, որոնք եվրոպական պատերազմը սկսվելուց հետո մի քանի տարվա ընթացքում դարձան կոտորածի, անօրինական սպանությունների և քմահաճ մահվան առարկա»⁸:

«Արտասահմանյան ապահովագրողներից գնված հայերի պայմանագրերի մի մասը իրենց տներից բռնի տեղահանվելու ընթացքում մոռացության տրվեց: Սարսափահար հայերը օգնության և ապաստան ստանալու խնդրանքով դիմում էին օտարերկրացիներին և միսիոներներին: Քչերը կարողացան պահ տալ իրենց արժեքավոր իրերը, ներառյալ կայսրությունում գտնվող ամերիկյան միսիոներների պայմանագրերը»⁹: Հայերի կյանքի ապահովագրման պայմանագրերը պահ վերցրած անձանցից մեկը էրզրումի ամերիկյան միսիոներ Ռ. Սթեփլթոնն էր: Այս քաղաքն ակնաստես եղավ տասնյակ հազարավոր հայերի բռնազաղթին:

Ռ. Սթեփլթոնը միսիոներական դպրոցների տնօրենն էր և ապահովեց բռնազաղթված հայերի՝ զգալի քանակությամբ մոռացված պայմանագրերի վերաբերյալ վավերագրեր: Ավելի քան 900 հակ տարբեր արժեք ներկայացնող ապրանքներ 150 հայեր ապահովության համար պահ են տվել Ռ. Սթեփլթոնի տանը: Մոտ 500 հակ էլ գտնվում էր բժիշկ Քեյզի տանն ու գոմում: Հակերի արժեքը Սթեփլթոնը գնահատում էր 10-15 հազար թուրքական լիրա: Պարկերում հայտնաբերվեցին ՆՅԿԱԸ-ի կողմից տրամադրած բազմաթիվ պայմանագրեր¹⁰:

Ռ. Սթեփլթոնը Հեյզերին հանձնեց Տրապիզոնի 17 հայերի անունները, որոնք ՆՅԿԱԸ-ի հետ կնքել էին կյանքի՝ 19 ապահովագրման պայմանագրեր՝ յուրաքանչյուրը 500-2000 դոլար արժողությամբ: Չմատնանշված ապահովավճարների ստացականների ցուցակը նույնպես փոխանցվեց Հեյզերին: 1915 թ. հոկտեմբերի 12-ին ապահովագրված հայերի ապահովավճարների ստացականները Հեյզերը հետևյալ բացատրական նամակի հետ միասին փոխանցեց դեսպան Մորգենթաուին. «Հղվելով սեպտեմբերի 25-ին այստեղից ուղարկված՝ Էրզրումին առնչվող զեկուցագրին, սրանով այժմ պատիվ ունեմ կցելու Թուրքիայում ՆՅԿԱԸ-ի գործակալ «Վ.Վիթթերլ» ընկերության կողմից տրված կյանքի ապահովագրման պայմանագրերի ցուցակը, որը գտնվում է պրն. Սթեփլթոնի ձեռքում, և որը նրա մոտ են թողել տերերը, նախքան բռնազաղթը: Հավանական է, որ վերոհիշյալ անձանցից շատերը, եթե ոչ բոլորը, մահացել են: Հնարավոր է, որ հետևյալ տեղեկությունը շատ արժեքավոր կլինի ՆՅԿԱԸ-ի աշխատակիցների համար:

⁸ Բաքները պետքարտուղար Հյուգսին, 20 նոյեմբերի, 1922, *U. S. National Archives, RG 59, file 367. 115 N 48/3.*

⁹ **James L. Barton**, „*Turkish Atrocities*”: *Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917*, Ann Arbor, Gomidas Institute, 1998. **Ara Sarafian**, *United States Official Documents on the Armenian Genocide*, vol. 2, *The Peripheries*, Watertown, Mass.: *Armenian Review Books*, 1994.

¹⁰ **Օսկար Ս.** Հեյզերը Մորգենթաուին, 25 սեպտեմբերի, 1915, տե՛ս **Sarafian A.**, *United States Official Documents*, Vol. 2, p. 43-45.

Այդ առնչությամբ գոյություն ունեն կյանքի ապահովագրման մի շարք պայմանագրեր՝ ֆրանսիական, գերմանական և ավստրիական ընկերությունների հետ»¹¹:

Մորգենթաուն Հեյզերի հղած պայմանագրերը, որպես ի գիտություն, շտապ փոխանցեց «Նյու Յորք լայֆ»-ի Կ.Պոլսի աշխատակիցներին¹²: Պետքարտուղարությունը արքունիքում և ենթադրաբար մահացած, ապահովագրված այդ հայերի ցուցակը ուղարկեց Նյու Յորք՝ «Նյու Յորք լայֆ»-ի կենտրոնական գրասենյակ¹³: Ի պատասխան, Ադին նշում էր, որ պատրաստ է բավարարելու ընկերության ցանկությունը՝ նրան տրամադրելով «Նյու Յորք լայֆ»-ի հետ կնքած կյանքի ապահովագրման պայմանագրեր ունեցող բնագաղթած հայերի հետագա ճակատագրի վերաբերյալ ստացվող նոր տեղեկություններ¹⁴:

Մեծ թվով ապահովագրված հայերի գոյությունը լրացուցիչ կերպով վերահաստատվում է անմիջականորեն «Նյու Յորք լայֆ»-ի արխիվային փաստաթղթերով: Համաձայն չթվագրված, ներքին շրջանառության մեջ գործածված «Թուրքիան և Եգիպտոսը» զեկուցագրի, այդ ընկերության հետ պայմանագրեր ունեցող հայերն անհրաժեշտ են համարում նոր՝ «Լրացուցիչ հաշիվներ» անունը կրող մի շարք գործեր պարունակող թղթապանակի ստեղծումը: Ներքին գործածության համար, հավանաբար, փորձառու պահանջահայցերով զբաղվող աշխատակցի գրած այս զեկուցագիրը մանրամասն տեղեկություններ է պարունակում կոտորածների հետևանքով առաջացած՝ հայերի պահանջների վարման մեթոդների և գործերի գտնվելու վայրի մասին: «Այս գիրքը, որը գտնվում է այլ Լրացուցիչ հաշիվների հետ նույն տեղում, պարունակում է հսկայական տեղեկություն Առաջին աշխարհամարտի ընթացքում հայկական կոտորածների հետևանքով մահացածների վերաբերյալ»¹⁵:

Ընկերության կողմից ապահովագրված հայերի ամբողջական ցուցակը կարելի է գտնել Լրացուցիչ հաշիվները պարունակող գրքում: «Նյու Յորք լայֆ»-ի արխիվներում պահվող ապահովագրված հայերի անունները թաքցնելու փորձերը չհաջողվեցին... Արխիվային աշխատակից տիկին Թրեյսի Ռամոսն իր գրած

¹¹ Հեյզերը Մորգենթաունին, 12 հոկտեմբերի, 1915, *U.S. National Archives, RG 59, file 867. 5064/6*.

¹² Մորգենթաուն Կ. Պոլսում ՆՅԿԱԸ-ի աշխատակցին, 1 նոյեմբերի, 1915, *U.S. National Archives, RG 84, file 850. 6*.

¹³ Պետքարտուղարը Նյու Յորք-ի ՆՅԿԱԸ-ին, 22 դեկտեմբերի, 1915, *U.S. National Archives, RG 59, file 8675064/6*.

¹⁴ Պետքարտուղարի օգնական Ադին Նյու Յորք-ի ՆՅԿԱԸ-ին, 10 հունվարի, 1916, նույն տեղում:

¹⁵ «Թուրքիան և Եգիպտոսը» երկու էջանոց չթվագրված զեկուցագիրն իր խնդրանքով ուղղարկվել է հեղինակին՝ ՀՄԿ-ին: Այն կրում է «Կազմողի կողմից «Փաստեր Նյու Յորք լայֆի արտաքին գործարքներ վերաբերյալ» մակագրությունը:

նամակում նշում է, որ «ինքը չի տեսել «Լրացուցիչ հաշիվները»¹⁶ »: Կ.Պոլսում ԱՄՆ-ի դեսպանատանը 1916 թ. օգոստոսի 9-ին ուղղած նամակում Հենրի Լ. Ռոզենֆելդը՝ «Էքուիթաբլ»-ի չորրորդ փոխնախագահը, գնահատում է Թուրքիայում ընկերության բյուջեն և ֆինանսական դրությունը. «1916 թ. հունվարի 1-ին կազմակերպությունը Թուրքիայում ուներ ապահովագրական պայմանագրերով չվճարված 689883 դոլարի պարտավորություն: ...Ապահովաճարների հավաքումը և նախկին պայմանագրերի դիմաց պարտքերի վճարումը եղել է Թուրքիայում Էքուիթաբլի միակ գործունեությունը՝ 1912 թ. Թուրքիայում կազմակերպության նոր գործարքների իրականացման դադարեցումից հետո:

Նախքան պատերազմը Թուրքիայում գործարքներն իրականացվել են Փարիզի միջոցով: Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո կազմակերպությունը պայմանագրատերերի հարմարության համար հավաքել է ապահովավճարներ, տրամադրել փոխառություններ և վճարել պահանջահայցերի դիմաց Թուրքիայի երեք քաղաքներում՝ Կ. Պոլսում՝ «Ս. Միտրանի և Ընկերություն, Բանկիրներ» (S. Mitrani & Company, Bankers) կազմակերպության, Երուսաղեմում՝ նախկին գործակալ Ալթեր Լևինի և Զմյուռնիայում՝ նախկին գործակալներ Լ.-ի և Լ. Վարպետյանի միջոցով»¹⁷:

Թուրքիայում շատ ակտիվ է եղել «Յունիոն Վի» ընկերությունը: Համաձայն նրա տնօրենի, այն մեծ քանակությամբ կյանքի ապահովագրման պայմանագրեր էր վաճառել հայերին: Այս մասին տեղեկությունը բխում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին տնօրենի հղած նամակից: Հայտնաբերված նամակը կցված էր վերը հիշատակված՝ ԱՄՆ-ի պետքարտուղարին ուղղված «Նյու Յորք լայֆ»-ի փոխնախագահ Բաքների նամակին: ՆՅԿԱԸ-ի ծառայողների կողմից անգլերեն թարգմանված «Յունիոն Վի»-ի նամակը մատնանշում է, որ Թուրքիայում կյանքի ապահովագրման պայմանագրերը մեծ մասամբ վաճառվել են հայերին: Ինչ վերաբերում է հայերի կոտորածներին, դրությունը հետևյալն էր: Կյանքի ապահովագրման պայմանագրերի մեծ մասը պատկանում էր հայերին, որովհետև նրանք բաժանորդագրվել էին հատկապես Կ. Պոլսի իրենց ներկայացուցչի կողմից, որը նույնպես հայ էր, և որովհետև կաթոլիկները կազմում էին ապահովագրվածների գերակշիռ մասը. կյանքի ապահովագրությունը, լինելով սպեկուլյատիվ պայմանագիր, կարող էր հակասել «Ղորանի» սկզբունքներին¹⁸:

Չորս ապահովագրական ընկերությունների փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տասնյակ հազարավոր հայեր, նախքան ցեղասպանու-

¹⁶ Թրեյսի Ռամսուր՝ Նյու Յորք լայֆի արխիվային աշխատակիցը Հրայր Ս. Կարագյոզյանին, 17-ը մայիսի, 1996:

¹⁷ «Էքուիթաբլը» Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանին, 9 օգոստոսի, 1916, *U.S. National Archives, RG 84, file 850. 6.*

¹⁸ Բաքները պետքարտուղար Լանսինգին, 20 նոյեմբերի, 1922 (հավելված). սա 1922 թ. ապրիլի 11-ին ֆրանսիական «Յունիոն Վի» ընկերության Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին հղած հաղորդագրության պատճենն է, էջ 1-2:

թյունը, ունեցել են կյանքի ապահովագրական պայմանագրեր: Չնայած փաստաթղթերը վերաբերում են միայն չորսին՝ Թուրքիայում գոյություն են ունեցել կյանքի ապահովագրման գործով զբաղվող ավելի քան 12 ապահովագրողներ: Ուստի, ապահովագրված հայերի քանակն ավելին էր, քան ցույց են տալիս փաստաթղթերը:

Արդյո՞ք պետք է վճարել բացառիկ հանգամանքներում մահացած հայ զոհերի՝ փաստացիորեն կյանքի ապահովագրական պայմանագրերի դիմաց հասնող փոխհատուցումը: Կյանքի ապահովագրական պայմանագրերի հատուկ հոդվածներ, այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, ինչպիսիք են պատերազմն ու ինքնասպանությունը, կարող են մերժել փոխհատուցման վճարման պահանջահայցը: Պոտենցիալ պահանջահայցերի օրինականությունը պարզելու և կոտորածներից բխող փոխհատուցման պահանջի իրավունքը՝ ապացուցելու համար օգտակար կլինի ցույց տալ երկու՝ տարբեր, նմանատիպ՝ զոհերին վճարելու իրական ապացույցի ներկայացումը: Առաջին, փաստացի ապացույցներով ցույց կտրվի, որ ապահովագրական ընկերությունները ճանաչել են զոհերի վերապրող իրավահաջորդներին վճարելու հարկը: Նմանատիպ ճանաչումը պետք է ներկայացվի առնվազն ապահովագրական ավագ գործադիրն և ոչ երկիմաստ ոճով: Երկրորդ, իրավունքը դառնում է քննարկման ենթակա գործ, եթե հնարավոր է ցույց տալ, որ զոհերի որոշ ժառանգներ կարողացել են պահանջահայցեր ներկայացնել և ստանալ փոխհատուցում: Ներքին (ապահովագրողների) և արտաքին (զոհերի ժառանգների) ապացույց հանդիսացող փաստաթղթերի գոյությունը կապահովի հարկադրող փաստեր, որ այս կարգի՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջահայցերը իրոք վավերական են, իրենց առնչվող և փոխհատուցման ենթակա: Այստեղ քննարկվող փաստաթղթերը ուղղակիորեն առնչվում են նման անհրաժեշտ իրեղեն ապացույցներին:

Ապահովագրական ընկերության ներքին փաստաթղթերը ցույց են տալիս, որ իրականում օրինական տասնյակ հազարավոր պահանջահայցերից միայն շատ քչերի նկատմամբ է գործ բացվել: Պահանջահայցերի սահմանափակ քանակությունը երկու խոչընդոտի արդյունք էր: Առաջին, պահանջահայցի ներկայացումը դժվարին գործ էր: Հայցվորները այլևս չունեին օրինական մշտական բնակության հասցե և ակնհայտորեն չէին կարող ներկայացնել տեղի քաղաքացիական իշխանությունների կողմից տրված մահվան վկայականներ: Դա ապահովագրողների պարտադրած խոչընդոտող պայմաններից մեկն էր: Երկրորդ, զոհերի ժառանգներից շատերը նույնպես մահացան աքսորում՝ չթողնելով փոխհատուցման պահանջ ներկայացնող որևէ ժառանգ: Բրիտանական ապահովագրողներից գնված կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց ներկայացված պահանջներն իսկույն մերժվեցին, որովհետև բրիտանական կառավարությունը արգելեց «թշնամի երկրի քաղաքացի հանդիսացող անձի մահվան դիմաց փոխհատուցել պատերազմի ընթացքում»:

«Նյու Յորք Լայֆ»-ը փոխհատուցեց սակավաթիվ բռնագաղթած հայերի ժառանգների ներկայացրած պահանջները: Պետքարտուղարին հղած 1922 թ. նոյեմբերի 20-ի նամակում այդ ընկերության փոխնախագահ Բաքները թվերով

մանրամասնում է նրա կողմից ապահովագրված հայերի կյանքի դիմաց իրականացված վճարումները. «Համաձայն առկա արձանագրությունների, բայց դրանք կազմում են ընդամենը մի մասը, այս ընկերությունը գործնականում վճարել կամ պահանջահայցի է ենթարկվել, քանի որ կյանքը ապահովագրած անձինք սպանվել են օսմանյան կայսրությունում տեղ գտած կոտորածների կամ բռնագաղթի հետևանքով: Հիմնական գումարները հետևյալն են՝ ֆրանսիական ֆրանկով պայմանագրերի դիմաց՝ 1772338, ստեռլինգի դիմաց՝ 45214, դոլարի դիմաց՝ 7938: Այս պայմանագրերի դիմաց վճարելուց հետո պահուստներում մնաց՝ 1348775 ֆրանկ, 26873 ֆունտ ստեռլինգ, 6141 դոլար: Այս գումարը այսօրվա փոխանակման կուրսով կազմում է 230000 դոլար և չափորոշում է մինչ օրս ընկերության կրած կորուստները, որի համար, մեր կարծիքով, պատասխանատու է ճանաչվելու թուրքական կառավարությունը: Կասկածից վեր է, որ վերջնական կորուստը լիելու է ավելին, քան մինչ օրս վճարվել է ներկայացված հայցերի դիմաց¹⁹»: Նամակը ցույց չի տալիս, թե իրականում որքան գումար է վճարվել: Ստորև ներկայացվող փաստաթղթերը ցույց են տալիս, թե որքան դժվարին է եղել պահանջատիրական գործընթացը, և որքան վճռորոշ և որոշիչ դեր է խաղացել ժառանգներին փոխհատուցման գործում ԱՄՆ-ի դիվանագետների ու միսիոներների մատուցած օժանդակությունը: Երկու զոհերի ժառանգների պահանջահայցերի հետքերով գնալը ցույց է տալիս, որ առանց ամերիկյան միսիոներների և ԱՄՆ-ի դիվանագետների աջակցության (ժամանակ առ ժամանակ առանց ԱՄՆ-ի դեսպանի ուղղակի միջամտության) որևէ պահանջահայց չէր կարող հաջողությամբ լուծվել:

Վարդիվառ Կասսարջյանի դեպքում.

1915 թ. դեկտեմբերի 16-ին տիկին Կասսարջյանը իր երկու երեխաների՝ Բաբկենի և Սանդուհու հետ, իր ամուսնու և երեխաների հոր՝ 1915 թ. ամռանը տեղահանված և մահացած համարվող Վարդիվառ Կասսարջյանի անունից պահանջահայց ներկայացրեց ընդդեմ «Նյու Յորք լայֆ»-ի: Հալեպում և Դամասկոսում ամերիկյան հյուպատոսների և Կ. Պոլսում դեսպանի աջակցությամբ, որը մի քանի փուլով Կ.Պոլսի «Նյու Յորք լայֆ»-ի գրասենյակի հետ գրագրություն էր վարում, հանգուցյալ Վ. Կասսարջյանի ժառանգները, ի վերջո, կարողացան ստանալ կյանքի ապահովագրման պայմանագրի դիմաց փոխհատուցվող 600 դոլարը: Ընկերության Կ. Պոլսի գործակալը ԱՄՆ-ի դեսպանատան միջոցով ստացավ հանգուցյալ Կասսարջյանի անունից կատարված հայցը: Աշխատակիցը հետ ուղարկեց փաստաթղթերը Կ.Պոլսում ԱՄՆ-ի դեսպանատուն՝ խնդրելով տրամադրել պայմանագրի տիրոջ ժառանգների ինքնությունը հաստատող վավերացված ստորագրություններ: 1915 թ. դեկտեմբերի 20-ին դեսպան Մորգենթաուն փոխանցեց «Նյու Յորք լայֆ»-ի խնդրանքը Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեյմս Բ. Ջեքսոնին. ապահովագրված զոհի տեղահանված

¹⁹ Բաբկենը պետքարտուղարին, 20 նոյեմբերի, 1922:

Ժառանգների մասին վերջին լուրը եկել էր այնտեղից²⁰: 1916 թ. հունվարի 20-ին ստանալով Մորգենթաուի նամակը՝ Ջեքսոնը տեղեկացրեց նրան, որ Ժառանգներն այլևս չեն բնակվում Հալեպում և գտնվում են Դամասկոսում: Ջեքսոնը նշում էր, որ «Նյու Յորք լայֆ»-ի պահանջները անմիջապես փոխանցել է Դամասկոսում ամերիկյան հյուպատոսությանը²¹: 1916 թ. փետրվարի 17-ին ԱՄՆ-ի դեսպանատունը նշում էր. «Քանի որ նրանք իրենց թշվառ պայմանների պատճառով չեն կարող վավերացման համար վճարել ըստ կարգի սահմանված գումարը, ես ինքս, որպես վկա, վավերացրեցի նրանց ստորագրությունները»²²:

Դրանից հետո Դամասկոսի ամերիկյան հյուպատոսական աշխատակիցը փոխանցեց Ժառանգների ցանկությունը՝ ապահովավճարը ստանալու Դամասկոսի հյուպատոսությունում: 1915 թ. մարտի 15-ին Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանատունը ծանուցեց, որ ստացել է 11706 թուրքական ֆունտ (համարժեք 269240 ֆրանկին կամ 600 դոլարին) գումար²³: Ամերիկյան դեսպանատան կողմից գումարը ստանալու նույն օրը՝ 1916 թ. մարտի 15-ին, Դամասկոսում ամերիկյան հյուպատոսական աշխատակիցը տեղեկացվեց, որ, որպես պայմանագրերից բխող փոքր փոխհատուցում, Վարդիվառ Կասսաբջյանի Ժառանգներին օսմանցի Ռեզիի միջոցով Դամասկոս է ուղարկվել 11706 թուրքական ֆունտ²⁴: 1921 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Թուրքիայում «Նյու Յորք լայֆ»-ի առևտրական գործարքները վերաապահովագրվեցին Փարիզում գտնվող Յունիոն Վիի հետ: «Նյու Յորք լայֆ»-ից ձեռք բերված արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ Յունիոն Վին զբաղվել է ՆՅԿԱԸ-ի հետ ունեցած՝ հայերի հայցապահանջներով: Փարիզի Վնասների հանձնաժողովը, պահանջահայցերին հավանություն տալուց հետո, պահանջների վերաբերյալ վերջնական կարգադրություններ անելու համար փաստաթղթերը ուղարկել է «Նյու Յորք լայֆ»-ի Նյու Յորքում գտնվող գլխավոր կայատեղին: Հավանության գործընթացը պահանջեց սահմանել ապահովավճարի ժամանակագրական վճարման և վրիպումներից խուսափելու կարգը: Վրիպումների թվացյալ գոյությունը մանրագնին վերլուծության և քննարկման ենթարկվեց հանձնաժողովի կողմից, որը սահմանեց, որ վրիպումները եղել են ապահովագրվածների տեղահանման և մահվան արդյունք: Փարիզի Կորուստների հանձնաժողովի կատարած վրիպումների մասին մանրագնին վերլուծությունը եզրակացրեց, որ ապահովագրվածների տեղահանությունների և դրա հետևանքով

²⁰ Հյուպատոս Ջեսի Բ. Ջեքսոնին հղած նամակը, Հալեպ, 20 դեկտեմբերի, 1915, *U.S. National Archives, RG 84, file 850. 6*:

²¹ Հալեպում ԱՄՆ-ի դեսպանը դեսպան Հ. Մորգենթաուին, Կ. Պոլիս, 20 հունվարի, 1916, նույն տեղում:

²² Դամասկոսում ամերիկյան հյուպատոսության աշխատակից Հոֆման Ֆիլիպին, ամերիկյան գործերի ժամանակավոր հավատարմատար, Կ. Պոլիս, 17 փետրվարի, 1916, նույն տեղում:

²³ ԱՄՆ-ի Ժամանակավոր հավատարմատարը Քենեգյան Հանին, ՆՅԿԱԸ, Կ. Պոլիս, 15 մարտի, 1916, նույն տեղում:

²⁴ ԱՄՆ-ի Գործերի ժամանակավոր հավատարմատարը Սամուել Էսելմանին, Դամասկոսում հյուպատոսական աշխատակցին, Սիրիա, 15 մարտի, 1916, նույն տեղում:

մահվան ժամանակի դրությամբ, «Նյու Յորք լայֆ»-ին ներկայացված մի շարք պահանջահայցերից բոլորը եղել են «օրինական և ուժի մեջ»: 1919 թ. դեկտեմբերի 23-ից մինչև 1921 թ. Փետրվարի 17-ը Փարիզի Վնասների հանձնաժողովի կողմից 12 նմանատիպ հայցապահանջներ երաշխավորվեցին և դրանց նկատմամբ վերջնական կարգադրություններ արվելու համար ուղարկվեցին Նյու Յորքում ՆՅԿԱԸ-ի կենտրոնական գրասենյակ: Այս 12 պահանջահայցերը Փարիզի հանձնաժողովի տրամադրած երաշխավորություններով հանդերձ մանրամասն ներկայացվում են ստորև*:

1. (Բաժին 7) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 1523711 - Տեր-Սարգսյան- Թուրքիա - Գումարի չափը հասնում է 3146 ֆունտ, այն արտահայտում է որոշումը կայացնելու օրվա կուրսը և գնահաշիվը՝ 4 տոկոս շահույթով²⁵:

2. (Բաժին 5) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 1099444 Տոպալյան-Թուրքիա: Ապահովավճարների գումարները վճարվել են ընդհուպ մինչև 1915 թ. մարտի 26-ը: Այժմ հաստատված է, որ ապահովագրված հայը բռնագաղթվել է 1915 թ. մայիսին և տարեգրությունից քիչ անց մահացել²⁶:

3. (Բաժին 14) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր -1(?)44832 - Լուսարարյան - Թուրքիա - Այս պայմանագրով ապահովավճարները վճարվել են ընդհուպ մինչև 1915 թ. հուլիսի 6-ը: Պայմանագրով իրավունքներին տեր դառնալու և մահվան ապացույցներին առնչվող խոչընդոտները պետք է վերականգնվեն ու վերանայվեն²⁷:

4. (Բաժին 11) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 2502865 - Զորթյան - Թուրքիա - Այս պայմանագրով ապահովավճարները վճարվել են ընդհուպ մինչև 1915 թ. օգոստոսի 19-ը, իսկ ապահովագրվածը մահացել է 1916 թ. մարտի 19-ին²⁸:

5. (Բաժին 10) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - Սալյան-Թուրքիա - Այս պայմանագրով ապահովավճարները վճարվել են մինչև 1914 թ. դեկտեմբերի 23-ը: Ճիշտ ժամանակին ապահովավճարը մարելու նպատակով ապահովագրվածը դիմել է փոխառություն ստանալու: Այդ առաջարկն ընդունվել է ընկերության կողմից: 1915 թ. հունիսին, նախքան հնարավոր կլինեք իրականացնել փոխառության գործարքը, ապահովագրվածն աքսորվեց և քիչ անց մահացավ: Քվեարկվել է Փարիզի Վնասների ենթահանձնաժողովի երաշխավորագրի օգտին՝ ճանաչելով պայմանագիրն ուժի մեջ. փոխառության տրամադրման որոշումը կասեցվել է «ֆորս մաժորով»²⁹:

* 1-12 համարակալումը կատարել է հեղինակը և առկա չէ հանձնաժողովի տեքստի բնագրում:

²⁵ ՆՅԿԱԸ-ի արխիվները, Փարիզի ենթագրասենյակի կոմիտեի արձանագրությունները, Փարիզ, 23 դեկտեմբերի, 1919:

²⁶ Նույն տեղում, 15 հունվարի, 1920:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, 22 հուլիսի, 1920:

²⁹ Նույն տեղում, 29 հուլիսի, 1920:

6. (Բաժին 6) - Վնասի փոխհատուցման պայմագիր - 4638614 - Սակեագույան-Թուրքիա: - 1917թ. մենք Վաշինգտոնում Պետդեպարտամենտի կողմից տեղեկացվեցինք, որ այս պայմանագիրը բռնագրավվել է թուրքական պաշտոնական իշխանությունների կողմից: Քվեարկվել է իր պայմանագրի կորուստը ճանաչելու և երաշխավորվող անձի սովորական ապահովավճարին ուշադրություն չդարձնելու օգտին՝ տրամադրելով նրան պայմանագրի կրկնօրինակը³⁰:

7. (Բաժին 8) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 1047723 - Գրիգորյան-Թուրքիա - Այս պայմանագիրը ուժը կորցրել է 1915 թ. սեպտեմբերի 7-ին՝ ապահովավճարը և փոխառության տոկոսը չվճարելու հետ կապված: Ապահովագրվածը 1915 թ. մայիսին աքսորվել է Սվազ և տարագրության մեջ մահացել 1916 թ. հունիսի 11-ին: Քվեարկվել է Փարիզի Վնասների ենթահանձնաժողովի երաշխավորագրի օգտին՝ ճանաչելով պայմանագրի ուժը. 1915 թ. սեպտեմբերի ապահովավճարը չի վճարվել «Ֆորս մաժորի» պատճառով, քանի որ ապահովագրվածը եղել է աքսորում³¹:

8. (Բաժին 9) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 1075877 - Մարթայան-Թուրքիա - Այս պայմանագիրը ուժը կորցրել է 1915 թ. հունվարին (ընթերցելի չէ)՝ ապահովավճարը և փոխառության տոկոսը չվճարելու հետ կապված: 1915 թ. փետրվարին ապահովագրվածը դիմել է փոխառություն ստանալու: Փոխառության փաստաթղթերը պատրաստվեցին, և ապահովագրվածը 1915 թ. հունիսին վճարեց դրա դիմաց նախատեսված 49, 95 ֆրանկ մնացորդը: Բայց փոխառության համաձայնագիրը այդպես էլ երբեք չստացվեց, որովհետև ապահովագրվածի նամակը պահվել է փոստային իշխանությունների կողմից: Ապահովագրվածը մահացել է 1915 թ.³²:

9. (Բաժին 13) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 1074200 - Ամադյան-Թուրքիա - Նոյեմբերի 18-ի Փարիզի Վնասների ենթահանձնաժողովի հուշագիրն (առ այս կցված) ընդունվեց և քվեարկվեց՝ ճանաչելու երաշխավորագիրը: Պայմանագիրը ապահովագրվածի մահվան պահին ուժի մեջ է եղել³³:

10. (Բաժին 7) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 1527155 - Թումայան - Թուրքիա - Դեկտեմբերի 9-ի Փարիզի Վնասների ենթահանձնաժողովի, առ այս կցված, հուշագիրն ընդունվեց և քվեարկվեց՝ ճանաչելու երաշխավորագիրը: Պայմանագիրը ապահովագրվածի մահվան պահին ուժի մեջ է եղել³⁴:

11. (Բաժին 7) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 1538506 - Գաթենյան - Թուրքիա - Դեկտեմբերի 20-ի Փարիզի Վնասների ենթահանձնաժողովի, առ այս կցված, հուշագիրն ընդունվեց և քվեարկվեց՝ ճանաչելու երաշխավորագիրը: Պայմանագիրը ապահովագրվածի մահվան

³⁰ Նույն տեղում, 2 սեպտեմբերի, 1920:

³¹ Նույն տեղում, 21 հոկտեմբերի, 1920:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, 18 նոյեմբերի, 1920:

³⁴ Նույն տեղում, 9 դեկտեմբերի, 1920:

պահին ուժի մեջ է եղել, ապահովվածարի չվճարումը պայմանավորված է եղել «ֆորս մաժորով»³⁵:

12. (Բաժին 3) - Մահվան դիմաց փոխհատուցման պայմանագիր - 4674534 - Քըրքըրյան - Թուրքիա - Այս պայմանագիրն ուժը կորցրել է 1915 թ. օգոստոսի 4-ի չվճարված պայմանագրի հետևանքով: Ապահովագրվածը մահացել է 1918 թ. հոկտեմբերին: Այժմ հաստատված է, որ ապահովագրված հայը աքսորվել է 1915 թ. մայիսին³⁶:

Պարզ չէ, թե արդյոք Փարիզի Վնասների ենթահանձնաժողովի քննարկումներում քվեարկված նպաստավոր երաշխավորագրերն ի վերջո հանգեցրեցին ժառանգներին փոխհատուցման վճարմանը: Հանձնաժողովի որոշման մեջ պայմանագրերը համարվեցին օրինական և վճարման ենթակա՝ չնայած աքսորի ենթարկման և մահվան միջև ընկած ժամանակահատվածում ապահովավճարների վճարումները չկատարելուն: Այնուհանդերձ, «Նյու Յորք լայֆ»-ը հարկադրեց իրեն տրամադրել աքսորվածների մահվան վերաբերյալ ապացույցներ, նախքան ինքը կճանաչեր նրանց պահանջները: Այն իրականում պայմանագրերով փոխհատուցման ենթակա որևէ վճարում չկատարեց. անգամ այն պարագայում, որ Փարիզի Վնասների հանձնաժողովը ճանաչել ու երաշխավորել էր իրականացնելու այդ վճարումները (տե՛ս Տոպալյանի և Լուսարարյանի օրինակները): Ստորև ցույց կտրվի, որ աքսորված, սիրիական անապատներում անպաշտպանվածության զոհ դարձած հայերին մահվան վկայականներ չտրամադրելը թուրքական քաղաքականությունը չէր:

«1919 թ. վերջին, երբ հնարավոր էր չափել ընկերության՝ պատերազմի ընթացքում ստացած նյութական իրական արդյունքները, պարզվեց, որ ընկերությունը գտնվում է ավելի ծաղկուն պայմաններում, քան երբևէ: Այդ թվականը բոլոր առումներով ամենանշանակալիցն էր ՆՅԿԱԸ-ի մինչ այդ եղած պատմության ընթացքում: Նրա նոր, 1919 թ. գործունեությունը (531000000 դոլար) գերազանցեց նրա նախորդ տարվա վերը հիշատակված (200000000 դոլար) գործունեությանը»³⁷:

Աբոթը օրինականացնում էր «Նյու Յորք լայֆ»-ի չափազանց մեծ ձեռքբերումները՝ հայտարարելով «Նյու Յորք լայֆ»-ի ֆինանսական կայունության ապացույցի մասին»³⁸:

«Նյու Յորք լայֆ»-ի նման «Յունիոն Վին» նույնպես, ինչպես դա ցույց է տալիս պետքարտուղարությանը հղած նամակի հավելվածը, ընդամենը փոքր քանակությամբ վճարումներ իրականացրեց վերապրածների ժառանգներին: Ֆրանսիական ընկերությունը այսպես է ներկայացնում կացությունը. «Համաձայն մինչ օրս մեզ հասած հայտարարության, բռնի տեղահանման և կոտորածների

³⁵ Նույն տեղում, 23 դեկտեմբերի, 1920:

³⁶ Նույն տեղում, 17 փետրվարի, 1921:

³⁷ Abbott, The Story of NYLIC, p. 212-13:

³⁸ Նույն տեղում, էջ 212:

հետևանքով մահացած ապահովագրված հայերի քանակը 327 է: Ապահովագրվածներին, որոնց մենք ստիպված ենք վճարել, վճարվելիք գումարը մեկ միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար հարյուր ֆրանկ է (մոտավորապես 290 հազար դոլար): Անհրաժեշտ է ասել, որ այս պայմանագրերով ապահովագրված անձանց վճարմանն առնչվող մաթեմատիկական պահուստները կազմում են 346 հազար 6 հարյուր վաթսու ֆրանկ: Այսպիսով, տարբերությունը 1 միլիոն 116 հազար 440 ֆրանկ է:

Այս վերջին գումարը ներկայացնում է այժմ մեր ունեցած կորուստները, որի պատճառը մեր ապահովագրվածների մահն է: Այս մահացությունները թուրքերի մեղսակցության և ոչ թե մահ առաջացնող բնական գործոնների հետևանք են»³⁹:

«Նյու Յորք լայֆ»-ն ու «Յունիոն Վի»-ն ցնցվեցին, քանի որ ներկայացված հայցապահանջները առնչվում էին աքսորված ստվար քանակությամբ հայերի մի մասին: Ապահովագրողներն անհանգիստ էին, քանի որ պահանջահայցերի վերջնական մեծ ծավալը իրենց պատճառելու էր հսկայական կորուստներ: Այդ անհանգստությունն արտահայտվեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարություն հղած նամակում. «Ամեն օր ստանում ենք ապահովագրված հայի մահվան մասին նոր ծանուցում, որը մինչ օրս տարբեր պատճառներով անհնար է եղել հանձնել մեզ: Դրանով կանխատեսվում է, որ մեր վնասների սահմանված չափը նկատելիորեն գերազանցելու է վերը հիշատակված գումարը: Կոտորածներում զոհված հայերին վճարված իրական գումարը կազմում է 573 հազար 523 ֆրանկ է (մոտավորապես 114 հազար դոլար)»⁴⁰:

Ֆրանսիական կառավարությունը հայերի կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց գումարների վճարումը չհամարեց «թշնամուն» իրականացվող վճարումներ: Ֆրանսիական ապահովագրողը չհարկադրեց ներկայացնել մահվան վկայականներ, ինչպես այդ կատարեցին «Նյու Յորք լայֆ»-ը և որոշակիորեն, ինչպես կտեսնենք, «Էքուիթաբլ»-ը, որը խուսանավում էր՝ պահանջելով «մահվան վկայական»: «Էքուիթաբլ»-ին խստագույնս հակադիր «Յունիոն Վի»-ի վարած քաղաքականությունից հետևում է, որ նա կարծում էր, թե ապահովագրված հայ զոհերի վերապրող ժառանգներին վճարելու մերժումը կնշանակեր հույժ անամոթաբար և վնասակար կերպով ոչնչացնել Ֆրանսիայի «հեղինակությունն ու փառքը»: «Մեծ ընկերության համար անվայել է, հակառակ արդարության և խորապես վնասակար մեր երկրի հեղինակությանն ու փառքին՝ հրաժարվել վճարումներն իրականացնելուց»⁴¹:

Թարգմ.՝ ՍԱՐԴԻԽԱՆՅԱՆ Տ.Ն.
(շարունակելի)

³⁹ Բաքները պետքարտուղարին, 20 նոյեմբերի, 1922 (հավելված), էջ 2:

⁴⁰ Նույն տեղում, էջ 2-3:

⁴¹ Նույն տեղում, էջ 3: